ՀԵՍՈՒՐՍՆ ԵՒ ՀԵՍՈՒՐՍՆԱԿՑՍՆՆԵՐ

(ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

2014 թ. լրանում է Հայաստանի առաջին բարձրագոյն ուսումնական հաստատութեան՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամեակը:

Յոբելեանի առթիւ՝ տեսչութիւնը նշանաւոր ճեմարանականների կեանքն ու ժառանգութիւնն ուսումնասիրելու ծրագիր է ձեռնարկել. համապատասխան ամբիոնների միջոցով հրատարակութեան են պատրաստւում նրանց տպագիր եւ անտիպ արժէքաւոր աշխատութիւնները՝ վերջնական նպատակ ունենալով երկերի լիակատար ժողովածուների հրատարակութիւնը: Սրան զուգահեռ՝ Ճեմարանի բակալաւրիատի եւ մագիստրատուրայի սաներին յանձնարարւում է աւարտաճառի ուսումնասիրութեան առարկայ դարձնել նշանաւոր ճեմարանականներին վերաբերուող նիւթերը՝ կարեւորելով նաեւ արխիւային փաստաթղթերի ուսումնասիրութիւնը:

Այս առումով ուշադրութեան կենտրոնում են բոլոր երեւելի ճեմարանականները, մանաւանդ նրանք, որոնց խորհրդային հասարակարգի վարած քաղաքականութիւնը միտումնաւոր մոռացութեան էր մատնել, եւ որոնց ժառանգութիւնը ժամանակին արգելուած գրքերի ցանկում էր: Արգելուած էր ոչ միայն նրանց մասին գրելը, այլեւ յիշատակելը: Փաստ է, որ նրանց անցած ուղին եւ ստեղծած ժառանգութիւնը համապատասխանաբար չեն արժեւորուել, աւելին պահպանուած կենսագրական տուեալներն ի մի չեն բերուել եւ ամբողջացուել: Այսօր մասնաւոր դժուարութիւն է ներկայացնում նրանց մասին գրելը, մինչդեռ այդ հեղինակները պակաս նշանակալի ներդրում չեն ունեցել հայագիտութեան զարգացման գործում: Յանիրաւի մերժուած անցեալի հանդէպ արթնացած հետաքրքրութիւնն անհրաժեշտ է դարձնում համախմբել ճեմարանականների վերաբերեալ պահպանուած վկայութիւններն

ու բոլոր տեսակի այլ նիւթերը: Ցիշեալ գաղափարի հասունացման համար անհրաժեշտ հող էր նախապատրաստուել դեռեւս տարիներ առաջ, երբ Գէորգեան ճեմարանի տեսչութիւնը նախաձեռնեց հրատարակել «Նշանաւոր ճեմարանականներ» ժողովածուն, որը լայն արձագանք գտաւ ընթերցասէր հասարակութեան կողմից՝ Ճեմարանն ու ճեմարանականներին դարձնելով առանձին ուսումնասիրութեան նիւթ: Մշտապէս մեր ձեռքի տակ եղող երկհատորեակի յաճախակի ընթերցումը, ինչպէս նաեւ «Էջմիածին» ամսագրի «Ճեմարանականներ» բաժինը, ներշնչեցին ստեղծելու մասնաւոր շարք, որտեղ կներկայացուեն ճեմարանի եւ երեւելի ճամարանականների մասին պահպանուած նիւթերը, յիշողութիւններն ու ակնարկները: Շարքի վերնագիր ընտրելիս որոշեցինք հետեւել «Էջմիածին» ամսագրից ընթերցողին արդէն քաջածանօթ «Ճեմարանականներ» խորագրին՝ կատարելով ճշգրտող յաւելում՝ «Ճեմարան եւ ճեմարանականներ. փաստեր եւ վկայութիւններ»: Մեր պատկերացմամբ՝ այս խորագրի ներքոյ կարող են ներկայացուել ոչ միայն արխիւային փաստաթղթեր, նամակներ, այլ նաեւ յուշագրական, օրագրային բնոյթի նիւթեր, որոնք հետաքրքիր մանրամասներ են փոխանցում թէ՛ ճեմարանական յայտնի դեմքերի, թէ՛ ճեմարանի պատմութեան վերաբերեալ: Մանաւանդ ճեմարանի պատմութեան ուսումնասիրութեան համար սա կարեւոր է, քանի որ յիշեալ նիւթերի օգնութեամբ հնարաւոր կլինի՝

ա. վերականգնել նշանաւոր ճեմարանականների ամբողջական կենսագրութիւնը, հանրութեան ուշադրութեանը ներկայացնել նրանց կատարած գործը, բացայայտել այն գաղափարական դրդապատճառներն ու կապերը, որոնք հետաքրքրութեան որոշակի շրջանակ են ձեւաւորել նրանց ստեղծագործութեան համար, ներշնչել՝ իրենց կեանքը նուիրելու հայ ազգի կրթութեան եւ լուսաւորութեան գործին,

բ. ի մի բերել Ճեմարանի պատմութեանն առընչուող արխիւային եւ յուշագրական բնոյթի նիւթերը, բոլոր տեսակի նամակագրական փաստաթղթերը, որոնք լուսաբանում են նրա անցած ճանապարհը, հնարաւորութիւն ընձեռում հետեւելու հոգեւոր կրթօջախի զարգացման ընթացքին:

Միեւնոյն ժամանակ գնահատանքով պէտք է նկատել, որ «Նշանաւոր ճեմարանականներ» ժողովածուի ստեղծողներն իրենց ծրագիրը չեն սահմանափակուել միայն Ճեմարանի շրջանաւարտներով:

Յիշեալ խորագրի ներքոյ նրանք արդարացիօրէն նկատի են առել բոլոր այն անուանի անհատներին, որոնք իրենց գործունէութեան ընթացքում անմիջականօրէն առընչուել են Ճեմարանի պատմութեան հետ, նպաստել կարեւոր այդ հաստատութեան կայացմանը, նրա առաքելութեան արդիւնաւոր իրագործմանը: Ուստի գործի շահեկանութիւնից ելնելով՝ որոշեցինք աւելի ընդարձակել «Նշանաւոր ճեմարանականներ» ժողովածուի խմբագիրների (Տ. Ղեւոնդ քհնյ. Մայիլեան, պ. գ. թ., պրոֆ. Պ. Յովհաննիսեան, բ. գ. թ., դոցենտ Դ. Գիւրջինեան) որդեգրած հեռատես մօտեցումը: Մեր համոզմամբ՝ «Ճեմարան եւ ճեմարանականներ. փաստեր եւ վկայութիւններ» շարքի ներքոյ պէտք է ընդգրկել նաեւ այն նիւթերը, որոնք միջնորդաւորուած կերպով են կապւում Ճեմարանի հետ. դրանք կարող են լինել Ճեմարանի հետ առընչուած նշանաւոր անձանց մասին պահպանուած տեղեկութիւնները, ինչպէս նաեւ նրանց կողմից ստեղծուած նիւթերը, կողմնակի անձանց յուշերը, տպաւորութիւններն ու դիտարկումները: Այս վերաբերմունքը հնարաւորութիւն կտայ համախմբել առհասարակ Ճեմարանի պատմութեանը վերաբերող նիւթերը: Բնականաբար սա երկարատեւ ծրագիր է, սակայն, ինչպէս չինական ասոյթն է յիշեցնում՝ «Ճանապարհն սկսւում է առաջին քայլից»:

Այս գաղափարի իրագործումը կօգնի մեզ ապագայում՝

ա. Ճեմարանի պատմութեան մատենագիտութեան ստեղծման հիմքերը դնել,

բ. Գէորգեան Ճեմարանի ամբողջական ու գիտական պատմութիւնը շարադրել:

Ճեմարանը եւ ճեմարանականներին ներկայացնելիս առաջնորդուելու ենք ժամանակագրական կարգով, որը պատմականօրէն չորս շրջանի ենք բաժանել՝ ելնելով այն իրողութիւնից, որ ժամանակի քաղաքական իրավիճակը պայմանաւորող նշանակութիւն է ունեցել Ճեմարանի առաքելութեան համար, ազդել նրա պատմութեան ձեւաւորման վրայ, խթանել կամ խոչընդոտել նրա գործունէութիւնը: Ըստ այնմ՝

ա. Առաջին՝ 1874-1917թթ.,

բ. Երկրորդ՝ 1945-1991թթ.,

գ.Երրորդ՝ 1991-2002 թթ.,

դ. Չորրորդ՝ 2002 թ. մինչեւ մեր օրերը:

Այս բաժանումը, բնականաբար, կնպաստի ժամանակագրական կարգով հետեւելու Ճեմարանի զարգացման պատմութեանը,

վերականգնելու ոչ միայն նշանաւոր ճեմարանականների անցած արժանայիշատակ ուղին, այլեւ՝ Ճեմարանի ընթացքը:

Այս իմաստով մեր նախաձեռնութիւնը տրամաբանօրէն գալիս է լրացնելու «Էջմիածին» ամսագրի «Ճեմարանականներ» բաժնի աշխատանքները՝ աւելի լայն հնարաւորութիւններ ընձեռելով այն ուսումնասիրողներին, որոնք մասնաւոր հետաքրքրութիւն են տածում ճեմարանականների հանդէպ, զբաղւում են որեւէ հեղինակին կամ Ճեմարանի պատմութեանն առընչուող որոշակի տեսանկիւնների կամ նիւթերի եւ փաստաթղթերի ուսումնասիրութեամբ:

Յուսանք, որ «Ճեմարան եւ ճեմարանականներ. փաստեր եւ վկայութիւններ» շարքը շարունակական բնոյթ կունենայ եւ օգտակար կլինի յայտնի ճեմարանականների կեանքի եւ ժառանգութեան ուսումնասիրութեամբ զբաղողողներին՝ համակողմանի գնահատելու իրենց ընտրած հեղինակին, այդպիսով նպաստելով Ճեմարանի առաքելութեան վերհանմանն ու գնահատմանը, ինչպէս նաեւ կլուսաբանի այն կարեւոր դերը, որ ժամանակին կատարել է Գէորգեան Ճեմարանը հայ կեանքում: Իսկ ճեմարանականների ընտրած ուղին ներշնչման օրինակ եւ պատգամ կարող է դառնալ մերօրեայ հայ երիտասարդութեան համար՝ նրանց տոգորելով սեփական ժողովրդին եւ Եկեղեցուն ծառայելու բարձր գիտակցութեամբ. ինչպէս ժամանակին նկատել է «Արարատ» ամսագրի խմբագրականը՝ այսօր եւս «Ամբողջ ազգն աչք դրած սպասում է եկեղեցականութէան վերականգնման, աւերակ եկեղեցիների եւ վանքերի կառուցման, անապատացած վանքերի վերակազմութէան, ժողովրդի կրօնական, բարոյական կրթութէան աստիճանի բարձրացման, մայրենի լեզուի եւ գրականութէան բարգաւաճման...»[1]:

Այս շարքի հրատարակութեան համար նիւթեր կարող են տրամադրել բոլոր նրանք, ովքեր բարի ցանկութիւն ունեն նպաստելու գործին: Գէորգեան Ճեմարանի Պատմական աստուածաբանութեան եւ հումանիտար գիտութիւնների ամբիոնը ուրախ կլինի ուղղորդել ոչ միայն Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագոյն հաստատութեան սաներին, այլեւ այն համալսարանականներին, որոնք հետաքրքրութիւն ունեն որեւէ նշանաւոր ճեմարանականի կեանքի կամ ժառանգութեան ուսումնասիրութեամբ զբաղուելու:

«Ճեմարան եւ ճեմարանականներ. փաստեր եւ վկայութիւններ»

1 «Արարատ», 1894, էջ 386:

շարքը իւրաքանչիւր հեղինակի մասին պահպանուած վաւերագրերը կամ նրա նիւթերը ներկայացնելիս համառօտ կտայ նաեւ տուեալ անձի կենսագրականը, ընթերցողին պատկերացում տալով նրա ինքնութեան մասին:

Արշակ Տէր-Միքէլեան
(1864-1901)

«Նշանաւոր ճեմարանականներ. փաստեր եւ վկայութիւններ» շարքից «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին ենք ներկայացնում փիլիսոփայութեան դոկտոր Արշակ Տէր-Միքէլեանի (Գերմանիայում կրթուած առաջին սերնդի ճեմարանականներից) արխիւային փաստաթղթերից, որ պահւում է Հայաստանի ազգային արխիւի Գէորգեան Ճեմարանի ֆոնդում (տե՛ս ՀԱԱՑ, ֆ 312, ց. 2, գ. 1631): Վերջինիս կենսագրութեանն առընչուող նիւթերի փնտրտուքի շնորհիւ Ե. Չարենցի անուան ԳԱԹ-ում յայտնաբերուեցին կարեւոր նամակներ, որոնք նոր լոյս են սփռում Արշակ Տէր-Միքէլեանի կենսագրութեան վրայ: Մասնաւորապէս առանձնանում է Գէորգեան Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանեանին ուղղուած նամակը (տե՛ս ԳԱԹ, Կոստանեան Կ. Հ. Ֆ. 82, մ. ք. 2290), որով Ա. Տէր-Միքէլեանը խնդրում է ընդառաջել իր կրտսեր եղբօր՝ Ճեմարանում ուսանելու դիմումին: Այս նամակի հետքով յայտնաբերուեց Արշակ Տէր-Միքէլեանի եղբօր՝ Փիլիպպոս Տէր-Միքէլեանի արխիւը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 312, ց. 2, գ. 1637):

Վաւերագրերի սոյն հրատարակութեան մէջ այսպիսով ընդգրկել ենք՝

ա. Ա. Տէր-Միքէլեանի Գէորգեան Ճեմարանի արխիւային նիւթերը (Գէորգեան Ճեմարան),

բ. Ճեմարանի տեսուչ Կ. Կոստանեանին ուղղուած Ա. Տէր-Միքէլեանի նամակը,

գ. Փ. Տէր-Միքէլեանի անձնական գործից (Գէորգեան Ճեմարանի ֆոնդ) որոշ վաւերագրեր:

Յիշեալ նիւթերը կարեւորւում են այն իմաստով, որ օգնում են ամբողջացնելու Ա. Տէր-Միքէլեանի կենսագրական տուեալները:

Ա. Տէր-Միքելեանի արխիւային փաստաթղթերի (անձնական եւ յարակից) հրատարակումը կարեւոր է կրկնակի իմաստով. նախ, որ նա կարճ ժամանակում աստուածաբանական հարուստ ժառանգութիւն է ստեղծել (այն, ցաւօք, դեռեւս համակողմանի չի վերլուծուել եւ արժեւորուել), եւ երկրորդ՝ այս բեղուն հեղինակի մասին տեղեկութիւնները շատ սակաւ են: Դժուարութիւններ են առաջանում ոչ միայն ուսումնասիրութեան հարցում (քանի որ հեղինակի աշխատութիւնների մասին խօսելու համար անհրաժեշտ է հանգամանալից իմանալ նրա կենսագրութիւնը), այլեւ ստեղծագործական ընթացքի ներքին կապը եւ տրամաբանութիւնը վերականգնելիս:

Վերջին շրջանում Մայր Աթոռի հրատարակչութեան կողմից Ա. Տէր-Միքէլեանի գլխաւոր աշխատութիւնների լոյս ընծայումը («Քրիստոնէական», «Աստուածաբանական գիտութիւններ», «Պսակի Ս. Խորհուրդը», «Հայաստանեայց Եկեղեցու Սուրբ Կարգը» եւ այլն[2]) այսօր հրատապ են դարձնում նրա երկերի լիակատար ժողովածու եւ կենսամատենագիտութիւն ստեղծելու պահանջը: Հետեւաբար արխիւային այս նիւթերի հրապարակումը[3] բխում է ընթերցասէրների լայն շրջանակներում նրա թողած ժառանգութեան հանդէպ արթնացած հետաքրքրութիւնից, այն միեւնոյն ժամանակ մեզ կօգնի մօտ ապագայում հայ ընթերցողին համակողմանիօրէն ծանօթացնելու նրա կեանքին ու գրական ժառանգութեանը, որոշել նրա դերը ժամանակակից հայ աստուածաբանական մտքի պատմութեան մէջ:

Արխիւային նիւթերը հրապարակում ենք չնչին փոփոխութիւններով՝ հաշուի առնելով հայերէնի եւ ռուսերէնի մերօրեայ ուղղագրութիւնը եւ փաստաթղթերում անուն-ազգանունների միատեսակութեան պահպանման սկզբունքները:

---

2 Տե՛ս ,Արարատ»-ի ժառանգութիւն. Զ., Արշակ Տէր-Միքէլեան, Ս. Էջմիածին, 2009:

3 Ա. Տէր-Միքէլեանի՝ ՀԱՖ-ում գտնուող անձնական գործում (ֆ. 312, ց. 2, գ. 1631) 3-4 թերթերը չեն վերաբերում նշեալ հեղինակին: Այս մասին մանրամասն տե՛ս ,Նշանաւոր ճեմարանականներ» ժողովածուի Բ. հատորում՝ Տէր-Միքէլեանի կենսագրութեան մէջ (հեղինակ՝ Արման սրկ. Պօղոսեան):

* * *

Աստուածաբան, պատմաբան, հայագէտ, մանկավարժ, փիլիսոփայութեան դոկտոր Արշակ Տէր-Միքելեանը Գէորգեան Ճեմարանի առաջին շրջանաւարտներից է, որ ուղարկուել է Գերմանիա՝ ուսանելու, պայմանով, որ աւարտելուց յետոյ վերադառնայ Ս. Էջմիածին, ծառայի նրա կրթական առաքելութեանը:

Ա. Տէր-Միքէլեանը ծնուել է 1864 թ. Շուշիում: Նախնական կրթութիւնն ստացել է Շուշիի քաղաքային ուսումնարանում, որն աւարտել է 1881 թուականին: Նոյն թուականին ընդունուել է Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարան, աշակերտել Մաղաքիա արք. Օրմանեանին, որի շնորհիւ նրա մէջ աստուածաբանական գիտութիւնների հանդէպ սէր է արթնացել: Ճեմարանն աւարտել է 1888 թուականին: Օրմանեանի խորհրդին հետեւելով՝ աստուածաբանութեան մէջ կատարելագործուելու համար մեկնել է արտասահման, ուսանել Ենայի համալսարանում: Այստեղ աշակերտել է հայագէտ Հ. Գելցերին, աստուածաբան Ա. Հառնակին եւ այլոց: Մասնաւոր բարեկամական յարաբերութիւններ է զարգացրել յատկապէս Հ. Գելցերի հետ, որը ղեկավարել է նրա դոկտորական ատենախօսութիւնը: 1892 թ. պաշտպանել է "Die Armenische Kirche in ihren Bezeihungen zur Byzantinischen vom IV bis zum XIII Jahrhundert" թեմայով թեզը: Ապա նոյն թուականին թարգմանել է այն հայերէն, լրացրել եւ հրատարակել Մոսկուայում՝ «Հայաստանեայց Եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք» վերնագրով: Աշխատութիւնն արժանացել է Իզմիրլեան հիմնադրամի Սահակ-մեսրոպեան մրցանակին: Աշխատութեան արժէքը համակողմանի չի գնահատուած Հայ Եկեղեցու պատմաբանների կողմից. այն, ըստ էութեան բոլորովին նոր մեկնաբանութիւն է առաջարկում Դ.-Է. դարերի քրիստոնէական Եկեղեցու պատմութեան վերաբերեալ ի մասնաւորի կենտրոնանալով առաջին երեք տիեզերաժողովների հետ Հայ Եկեղեցու ունեցած առընչութիւնների վրայ: Նիւթի կարեւորութիւնն այսօր եւս արդիական է:

1892-ին՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի տեսչութեան օրօք Ա. Տէր-Միքէլեանը հրաւիրուել է Գէորգեան Ճեմարան՝ որպէս աստուածաբանութեան ուսուցիչ, իսկ 1893 թ. նշանակուել «Արարատ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ: 1894-ին Մկրտիչ Ա. Վանեցի (Խրիմեան Հայրիկ) Կաթողիկոսի յատուկ առաջադրանքով մեկնել

է Շուշի՝ որպէս կրօնի ուսուցիչ տեղի թեմական դպրոցում: Ա. Տէր-Միքէլեանն աշխատակցել է «Նոր-Դար», «Լումայ», «Մուրճ» թերթերին, ինչպէս նաեւ Ս. Էջմիածնի պաշտօնական «Արարատ» ամսագրին:

Ա. Տէր-Միքէլեանը երկարատեւ հիւանդութիւնից յետոյ մահացել է 1901 թ. Շուշիում՝ 37 տարեկան հասակում: Հայոց Եկեղեցին վաղաժամ զրկուեց իր լաւագոյն աստուածաբաններից մէկից, որը իւրայատուկ սէր եւ նուիրում էր տածում սեփական Եկեղեցու, մասնաւորապէս՝ նրա ստեղծած աստուածաբանական ժառանգութեան հանդէպ՝ պատրաստ ողջ ուժը ծառայեցնելու դրա ուսումնասիրման կարեւոր գործին:

Թէպէտեւ ժամանակակից հայ աստուածաբանական միտքը դեռեւս չի ուսումնասիրուել ըստ ուղղութիւնների, սակայն ելնելով Ա. Տէր-Միքէլեանի աշխատութիւնների բնոյթից՝ պէտք է նրան համարել հայ ժամանակակից աստուածաբանութեան պահպանողական թեւի ներկայացուցիչ, որը Հայ Եկեղեցու պատմութեան, դաւանանքի եւ եկեղեցաբանութեան հարցերն իր ժամանակի ոգուն համապատասխան մօտեցմամբ է մեկնաբանում եւ գնահատում: Աւանդապահութիւնը սակայն նրան չի սահմանափակում, եւ անկաշկանդ արտայայտում է իր մօտեցումը ցանկացած խնդրի առընչութեամբ. նրա համար միշտ ելակէտ է ծառայում Եկեղեցու գործնական պահանջը: Ի դէմս նրա ժամանակակից հայ աստուածաբանական միտքն ունի ինքնատիպ մի վերլուծաբան:

ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՄԱՐՈՅԵԱՆ
Մայր Աթոռի բարձրագոյն հոգեւոր-կրթական
հաստատութիւնների վերատեսուչ,
Գէորգեան Ճեմարանի տեսուչ

ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆ
Ս. Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան»
Մատենադարանի տնօրէն

№ 1

Свидетельство

Предъявитель сего Аршак Тер-Микелян при отличном поведении окончил полный курс учения трех специальных курсов Эчмиадзинской Армянской Духовной Академии, имееть получить диплом об окончании курса в течение июля месяца текущего года. Что подписью и приаожением Академичвской печати удостовериятся..

осв[ященик] (անընթեռնելի)

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 2

№ 2

Ծննդական եւ ծաղկի վկայականներս յետ ստացայ. 12 յունիսի 1888 ամի. Ս. Էջմիածին

Ա. Տէր-Միքէլեան

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 5

№ 3

Ի Լուս. Հայոց. սինոդ. սբյ Էջմիածնի
Ք. պաշտ. Հխ. ճեմ.

№ 22
Ք. փետր. 1885 *Վաղարշապատ*

Ընդ սմին առաջի առնեմ մեծարանօք բարձրագոյն հոգեւոր ատենիդ հարիւր ռուբլիս արծաթոյ, զոր յանձնեաց ինձ Արշակ Տր. Միք. աշակերտ

Զ. դասարանի ճեմարանի՝ քեռորդի մեծապատիւ Հայկազն գնդապետի եւ ազգախնամ Բարերարի Աղէքսանդր Մելիք Հայկազեանի ի հաշիւ վարձու ուսման իւրոյ իբրեւ թոշակառու գիշերօթիկ: Խնդրեմ խոնարհաբար զստացմանէ գումարիդ բարեհաճել տալ վարչութեանս եւ յիշեալ գնդապետին Մելիք Հայկազեանց:

ՀԱՓ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 6

№ 4

ընկալեալ ի 28 մարտի 1885

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Սինոդէ Սրբոյ Էջմիածնի պաշտօնակատարի տեսչի Ճեմարանի Գերապատիւ Գրիգոր եպսի Աղափիրեանց:

Ըստ հրաման Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զհայտարարութիւն Գերապատիւ Ձերում ի 16 փետրուարի համարաւ 22. ընդ որում առաջի առնէք զմի հարիւր ռուբլի թոշակադրամս աշակերտի ճեմարանի Արշակայ տր. Միքէլեան քեռորդւոյ գնդապետ Աղէքսանդր Մելիք Հայկազեանց զորս դանձապահ Սինոդիս ի լուսանցի այնր յատարարութեան ստացեալ է ի տեսչութիւն իւր: ՀՐԱՄԱՅԵՑԻՆ՝ Զըստացմանէ վերոդրեալ մի հարիւր ռուբլի դրամոց ծանուցանել Գերապատիւ Ձերում վասն տեղեկութեան: Ի 27. մարտի 1885 ամի՝ ի Սբ. Էջմիածին:

Անդամ Սինոդի Յովակիմ եպս.

յաշուապահ Յ.

ՀԱՓ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 7

№ 5

Ի Լուսաւորչական Հայոց Ս. Սինոդն Ս. Էջմիածին

Յայտարարութիւն

Տեսչութիւն Ճեմարանիս խոնարհաբար առաջի առնէ ընդ սմին Ս. Ատենիդ երեք հարիւր ռուբլի զթոշակադրամ ուսանողի Ճեմարանիս Արշակայ Տր. Միքայէլեան վասն 1885-86 եւ 1886-87:

12.19
ԻՆՅ յունուար 1887

ՀԱՓ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 8

№ 6

Վարչութիւն
Գէորգեան Ճեմարանի
Մայր Աթոռոյ
Սրբոյ Էջմիածնի
Թ. 13
23 յունուար 1887 ամի
Ս. Էջմիածին

Առ գերազնիւ դնդապետ
պ. Աղէքսանդր Մելիք-Հայկազեան

Տեսչութիւն Ճեմարանիս ընկալաւ ի ձեռն Արշակայ Տէր Միքայէլեան, ուսանողի Ճեմարանիս, երեք եւ հարիւր ռուբլի (300 ռ.) զթոշակադրամ նորա որդեգրի Ջերոյ վասն 1885-86 եւ 1886-87 ուսումնական ամաց:

ՀԱՓ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 9

№ 7

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Սինոդէ Սրբոյ Էջմիածնի տեսչի Ճեմարանի պ. Արշակայ Նահապետեանց:

Ըստ Հրաման Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զհայտարարութիւն Ձեր ի 23 յունուարի 1887 ամի N 12. ընդ որում առաջի առնէք թոշակադրամ ուսանողի Ճեմարանի Աթոռոյն Արշակայ Տր. Միքէլեանց Շուշեցւոյ վասն 1885-1886 եւ 1886-1887 ուսումնական ամաց զերեք հարիւր ռուբլիս, զորս դանձապահ Սինոդիս ի լուսանցի այնր յատարարութեան ստացեալ է ի տեսչութիւն իւր: ՀՐԱՄԱՅԵՑԻՆ՝ Զբստացմանէ վերոգրեալ երեք հարիւր ռուբլի դրամոց ծանուցանել մեծապատուութեան Ձերում վասն տեղեկութեան: Ի 31. յունուարի 1887 ամի ի Սբ. Էջմիածին:

Անդամ Սինոդի Սարգիս եպս.

յաշուապահ Յ.

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 10

№ 8

Ճեմարան Մ. Աթոռոյ
Ս. Էջմիածնի
ի 12 դեկ.ի 1887 ամի
N 164
Ս. Էջմիածին

Առ Մեծապատիւ պ. Աղէքսանդր Մելիք-Հայկազեան

Վարչութիւն Ճեմարանիս պարտ առնեն վարկանի ծանուցանել Ձերդ Մեծապատուութեան զի բարէաճեցիք հատուցանել զհարիւր յիսուն (150 ռ.) ռուբլի թոշակադրամս քեռորդւոյ Ձերոյ Արշակայ Տէր-Միքէլեան ուսանողի Գ. լսարանի Ճեմարանիս:

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 11

№ 9

№ 67 росписки

ТЕЛЕГРАММА

Эчмиадзин
Епископу Агапириацу

պատասխանի փողը ստացա 60 կ. Ղեւոնդ վարդապետից:

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 12

№ 10

ՄՐՑԱԳԻՐ

Ուսումնական խորհուրդ Հոգեւոր Ճեմարանի Հայոց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի վկայէ, զի Արշակ Ղազարեան Տէր Միքէլեան ծնեալ ի Շուշի թեմին Արցախու յամի 1864 աւարտեալ զընթացս ուսմանց ի Հոգեւոր դպրոցի ճեմարանիս աշակերտեցաւ մասնագիտական բաժնի սորին յամին 1885 եւ յոյժ գովիլի վարուք կատարեալ զընթացս ուսմանց երից ամաց, եցոյց ի վերջին հարցաքննութեան յամսեանն մայիսի 1888 ամի յառաջադիմութիւն այսպիսի.

Բնական աստուածաբանութիւն յոյժ գովելի	*Սրբազան բէմբասացութիւն գովիլի*	*Մանկավարժութիւն գովիլի*
Տեսական աստուածաբանութիւն յոյժ գովիլի	*Եկեղեցական մատենագրութիւն գովիլի*	*Գիտութիւն ասաւանդութեան գովիլի*
Բարոյական աստուածաբանութիւն յոյժ գովիլի	*Եկեղեցական ատմութիւն յոյժ գովիլի*	*Մատենագրութիւն Հայոց յոյժ գովիլի*
Քննաբանութիւն Ս. Գրոց գովիլի	*Տրամաբանութիւն գովիլի*	*Մատենագրոնութիւ Ռուսաց գովիլի*
Մեկնաբանութիւն Ս. Գրոց յոյժ գովիլի	*Հոգեբանութիւն գովիլի*	*Ընդհանուր մատենագրոնութիւ յոյժ գովիլի*
Բացատրութիւն Ս. Գրոց յոյժ գովիլի	*Բարոյական իմաստասիրութիւն գովիլի*	*Ֆրանսերէն լեզու բաւարար*

Այլ եւ քննեալ զշարադրութիւնն, զոր մատոյց նա ըստ նշանակեալ բնաբանի, Ուսումնական խորհուրդս ԺԷ. գումարման իւրում յ 3 յունիսի 1888 ամի սահմանեաց ճանաչել զ Տէր-Միքէլեան արժանի այսմ մրցագրի՝ դրոշմելոյ կնիքով Ճեմարանիս: Ի 11 օգոստոսի 1888 ամի, ի Ս. Էջմիածին:

ՏԵՍՈՒՉ Հ. ՃԵՄԱՐԱՆԻ

№ 114

Քարտուղար Խորհրդոյ

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 13

№ 11

ընկալեալ հոկտ. ..... յ 31 հոկտ. 1884 ի $5^{2}15^{6}$ երեսուն՝ի

Телеграф *в* Эчмиадзин
из Поти

Телеграма *№ 1007*

Свидетельствую вам глубачайшую Свою преданноцть[.] Прошу принять [в] Академию счет племяника Аршака Тер-Микелова[,] будущего верного слугу Церкви[.] Он приедет на дяах. Душевно рад Вашему новому назначению[,] от души паздравляю. Желаю полного преуспеяния Академии[.]

Ваш Мелик Гайказянц

ՀԱՖ, ֆ. 312, ց. 2, գ. 1631, թ. 14

№ 12

Յարգելի Ստեփան Կանաեան

Շնորհակալութեամբ ստացա Ձեր նամակը, որով խորհուրդ եք տալիս եղբօրս ընդունելութեան համար նորա բարերարի կողքին խնդրել ուղարկել տալ Ճեմարանի վարչության անունով: Մեծապատիւ պ. Իսահակ Ժամհարեանցն ընդունելով եղբօրս տիկին [անընթեռնելի] *սանիկ, մեր համաձայնութիւնն էլ առաւ եւ գրաւոր կերպով խնդրեց ինձ, որ ես դիմեմ խնդրագրով Նորին Վեհափառութեան: Մի անգամ ես խնդրեցի, որ ինքը դիմի, բայց մի քանի շաբաթ առաջ կրկին խնդրեց, որ եթէ կարելի է փողը ինքս ստանամ եւ ուղարկեմ Ճեմարանի վարչութեանը: Ուստի անվայել եմ համարում վերստին բարձրացնել մի բարերարի, որ այդքան դրամ է զոհում Ճեմարանի օգտին առանց իմ կողմից մի փոքրիկ խնդիրք անգամ լսած լինելու:*

Սակայն հետեւելով Ձեր բարեկամական խորհրդին՝ ուղարկում եմ ահա մի խնդրագիր եւս մեծապատիւ պ. տեսչի անունով, ըստ վերոյիշեալ յանձնարարութեան, Ձեր՝ իբրեւ տեսչի պաշտօնավարի հասցէով: Լիահոյս եմ, որ դուք կաշխատէք Ձեր կողմից նպաստել Քրիստափորի ընդունելութեան՝ իբրեւ նորա ուսուցիչ: Պարոն Կոստանեանին եւս կգրէի, եթէ գիտենայի. չգիտեմ նոյնպէս որտե՞ղ է տեսչի օգնական վարդապետը:

Կամենալով վստահ լինել մեր բարեկամութեան վրայ, մ. հարգանոք Արշակ Տէր-Միքէլեան:

7 օգոստոսի 1897.
Շուշի

ՀԱԱ, ֆ. 312, ց2, գ.1637, թ.7

№ 13

Մեծարգոյ պ. Կոստանեան

Այսօր մեծ. պ. ի. Ժամհարեանից հեռագիր ստացա, որով նա յայտնում է, որ բարեհաճել եք ընդունել եղբօրս, եւ կարգադրում է շուտով ուղարկել նորան Ս. Էջմիածին: Շտապելով ճանապարհ դրի նորան, որպէսզի շատ չուշանա ու չզրկուի դասերից, անշուշտ այս օրերիս կհասնի այդտեղ: Ընդ սմին պարտք եմ համարում յայտնել Ձեզ խորին շնորհակալութիւնս՝ խնդրելով միանգամայն, որ Ձեր բարեկամական ուշադրութեամբ քաջալեր լինէք նորան, որով առաւել եւս զարկ տուած կլինէք նորա եռանդուն աշխատասիրութեան:

Կյուսամ, իմ յարգելի ուսուցիչ, որ իմ այս խնդիրս անտես չէք առնիլ, ըստ որում եւ մնամ յարգանօք:

Ձեր Արշակ Տէր-Միքէլեան:

5 հոկտ. 1897
Շուշի

ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆոնդ:

№ 14

Մեծապատիւ պ. Մ. Բարխուդարեան

Անշուշտ յիշում եք, որ այստեղ մի քանի բաժանորդներից դրամը ստացաք «Հանդէսիտ» համար. այժմ նոքա խնդրեցին ինձ գրել Ձեզ, որ կամ խոստացած համարը ուղարկէք եւ կամ անցեալ տարեշրջաններից մէկն ու մէկը տաք իւրեանց վճարի փոխարէն: Այս առաջարկութիւնը լաւ է եւ ես պարտք համարեցի գրել Ձեզ:

Ողջոյններով ու յարգանօք
Ձեր Արշակ Տէր-Միքէլեան

26 մայիսի 1900
Շուշի.

ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆոնդ: